Իրավունքների Պաշտպանություն
Առանց Սահմանների ՀԿ

Ժողովրդավարության
զարգացման
հիմնադրամ

ԶԵԿՈՒՅՑ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույն զեկույցի պատրաստումը հնարավոր է դարձել Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի օժանդակության շնորհիվ «Արդարացի դատաիրավական բարեփոխումներ» ծրագրի շրջանակներում: Զեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի տեսակետների և դիրքորոշումների հետ:

Զեկույցի հեղինակներն են Դիանա Հարությունյանը, Հասմիկ Հարությունյանը:
Խմբագրել է Արաքս Մելքոնյանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 5

1. ՄԱՄՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ԳՐԱՎՈՐ ՓՈՒԼԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ 7

1.1 Որակավորման գրավոր քննություն. Իրավակարգավորումներ 7

1.2 Դիտարկված որակավորման գրավոր ստուգումները 8

1.3 Որակավորման ստուգման գրավոր քննության ընթացքը 10

1.4 Որակավորման գրավոր քննության արդյունքների գնահատումը 13

1.5 Գրավոր քննության արդյունքների բողոքարկում 14

2. ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՓՈՒԼ 15

3. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՓՈՒԼԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ 16

3.1. Նախնական հարցազրույց 16

3.2. Բարձրագույն դատական խորհրդի կողմից անցկացվող հարցազրույցի փուլ. Իրավակարգավորումներ 17

3.3. Դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում իրավագիտության բնագավառում գիտական աստիճան ունեցող անձի, ինչպես նաև իրավաբան գիտնականի ընդգրկման կարգը 19

3.4. Դիտարկված հարցազրույցի փուլեր 20

3.5. Հարցազրույցի ընթացքը 23

3.6. Բարձրագույն դատական խորհրդի կողմից բարեվարքության վերաբերյալ տրված հարցաղրումներ 25

3.7. Բարձրագույն դատական խորհրդի կողմից հարցազրույցի գնահատում 25

3.8. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տրված բարեվարքության եզրակացություններ 28

3.8.1 Հարցազրույցի փուլ անցած հավակնորդների բարեվարքության վերաբերյալ տեղեկատվություն 28

3.8.2 Հարցազրույցի փուլը հաղթահարած թեկնածուների բարեվարքության վերաբերյալ տեղեկատվություն 30

4. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՓՈՒԼԸ ՀԱՂԹԱՀԱՐԱԾ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ 33

5. ԸՆՏՐՎԱԾ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ ԴԱՏԱՎՈՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ 34

ԱՄՓՈՓՈՒՄ 36

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 37

ՀԱՎԵԼՎԱԾ 1 38

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունում 2022 թվականին ստեղծվել է մասնագիտացված Հակակոռուպցիոն դատարան, որի դատավորների ընտրության և նշանակման գործընթացի առաջին շրջափուլերը դիտարկվել են «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության կողմից: Դատարանի ձևավորման և դատավորների ընտրության գործընթացի արդյունքները ամփոփված են «Հակակոռուպցիոն դատարանի ստեղծումը Հայաստանի Հանրապետությունում» զեկույցում:[1]

Սույն զեկույցը ներառում է 2022 թվականի երկրորդ կիսամյակի, 2023 թվականի և 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կայացած դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի կոռուպցիոն հանցագործությունների քննության ենթաբաժնի և հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության ենթաբաժնի թվով 4 որակավորման ստուգումների ընթացքը և արդյունքները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են տեղեկությունների հավաքագրման և վերլուծության տարբեր մեթոդներ:

Մշտադիտարկում. Կազմակերպության կողմից իրականացվել է Բարձրագույն դատական խորհրդի (հետայսու տեքստում՝ նաև ԲԴԽ) կողմից հայտարարված մրցույթների դիտորդություն: Հետազոտության շրջանակներում դիտարկվել են 2022 թվականի հոկտեմբերի 11-ին, 2023 թվականի փետրվարի 10-ին, 2023 թվականի սեպտեմբերի 26-ին և 2024 թվականի հունվարի 30-ին կայացած դատավորների թեկնածուների որակավորման ստուգման նպատակով անցկացված հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական

[1] ԻՊԱՍ, Հակակոռուպցիոն դատարանի ստեղծումը Հայաստանի Հանրապետությունում, զեկույց, հասանելի է https://prwb.am/2023/06/20/zekuyc-7/

գործերի քննության ենթաբաժնի համալրման նպատակով անցկացված, ինչպես նաև կոռուպցիոն հանցագործությունների քննության ենթաբաժնի համալրման նպատակով անցկացված որակավորման գրավոր ստուգումները, որից հետո նաև հարցազրույցի փուլերը: Դատավորների թեկնածուների որակավորման ստուգումների դիտորդություն իրականացնելու նպատակով Կազմակերպությունը, օրենքով սահմանված կարգով, դիմում է ներկայացրել Դատական դեպարտամենտին (հետայսու՝ Դեպարտամենտ), ինչի հիման վրա հնարավոր է դարձել ներկա գտնվել որակավորման քննություններին:

Փաստաթղթերի ուսումնասիրություն. Ուսումնասիրվել են՝ Դատական օրենսգիրքը և ԲԴԽ համապատասխան որոշումներն ու կարգերը, ՀՀ Նախագահի կողմից ընդունված հրամանագրերը:

Բաց աղբյուրների ուսումնասիրություն.Կազմակերպության կողմից ուսումնասիրվել են ՀՀ Դատական իշխանության պաշտոնական կայքէջում ներկայացված դատավորների թեկնածուների ցուցակներում ներառված անձանց ինքնակենսագրական տվյալների ուսումնասիրություն, ինչպես նաև հրապարակային, հասանելի այլ տեղեկությունների հետազոտություն:

Տեղեկատվության հարցումներ. Կազմակերպության կողմից հարցումներ են կատարվել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին (հետայսու՝ ԿԿՀ կամ հանձնաժողով) և Դեպարտամենտին:

1. ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ԳՐԱՎՈՐ ՔՆՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Որակավորման ստուգումը բաղկացած է հայտի ներկայացման և ստուգման, գրավոր քննության և հարցազրույցի անցկացման փուլերից:[2]

Դատավորի թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկվել հավակնող անձը (հետայսու՝Հավակնորդ) որակավորման ստուգման մասին որոշման հրապարակման օրվան հաջորդող օրվանից մեկամսյա ժամկետում որակավորման ստուգմանը մասնակցելու համար Բարձրագույն դատական խորհուրդ է ներկայացնում սահմանված ձևի հայտ:[3]

1.1 Որակավորման գրավոր քննություն. Իրավակարգավորումներ

Որակավորման գրավոր քննությունը կարող է անցկացվել տարբեր օրերի և տարբեր առաջադրանքներով:

Դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության առաջադրանքները կազմվում են թեստային առաջադրանքների՝ հակիրճ իրավական հիպոթետիկ խնդիրների միջոցով՝ դրանց ճիշտ լուծումները հավակնորդի կողմից ընտրելու պահանջով:[4]

Քննության կազմակերպման կարգով սահմանվում է 160 հարցից բաղկացած շտեմարան, որից 80 հարց ընտրվում է յուրաքանչյուր թեստի համար: Հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության ենթաբաժնի թեստային տարբերակը բաղկացած է 80 հարցից՝ 50 հարցը նյութական, 30-ը՝ դատավարական իրավունքի վերաբերյալ, իսկ հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի կոռուպցիոն հանցագործությունների

[2] Տե՛ս դատական օրենսգիրք հոդված 99:
[3] Տե՛ս դատական օրենսգիրք հոդված 98:
[4] Նմուշ օրինակները տե՛ս https://court.am/hy/official-inner/484

քննության ենթաբաժնի թեստային տարբերակը բաղկացած է 80 հարցից՝ 40 հարցը նյութական, 40 հարցը՝ դատավարական իրավունքի վերաբերյալ:[5]

Անհրաժեշտ է փաստել, սակայն, որ թեստային առաջադրանքները, որպես գնահատման գործիք, լիարժեքորեն չեն բավարարում հավակնորդների գիտելիքների, վերլուծական և իրավակիրառ կարողությունների ստուգմանը: Հավակնորդի կողմից ընտրվում են տարբերակներ, որոնք չեն ենթարկվում մանրակրկիտ վերլուծության, ինչի արդյունքում թեստի արդյունքները չեն կարող ամբողջական պատկերացում տալ նրա իրական կարողությունների մասին: Սովորաբար, թեստերը ենթադրում են արագ ու միանշանակ պատասխանի ընտրություն՝ առանց խորքային վերլուծության:

Հետևաբար, անհրաժեշտ է ներդնել այնպիսի քննական աշխատանքների նոր մեթոդներ, որոնք կներառեն ինչպես թեստային առաջադրանքներ, այնպես էլ գործնական խնդիրներ:

Այսպիսով, միայն թեստային առաջադրանքներն ամբողջովին չեն կարող արտացոլել հավակնորդի վերլուծական մտածողությունը և գործնական կարողությունները:

1.2 Դիտարկված որակավորման գրավոր ստուգումները

Հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի համալրման որակավորման ստուգման շրջանակներում Կազմակերպության կողմից դիտարկվել են՝

- 2022 թվականի հոկտեմբերի 11-ին կայացած դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի կոռուպցիոն հանցագործությունների քննության ենթաբաժինը՝ 2 թեկնածուով, և հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության ենթաբաժինը՝ 3 թեկնածուով համալրելու նպատակով անցկացված որակավորման գրավոր քննությունը:[6] Կոռուպցիոն հանցագործությունների քննության ենթաբաժնի

[5] Տե՛ս https://court.am/hy/decisions-single/1479
[6] Տե՛ս https://court.am/hy/official-inner/323

որակավորման ստուգմանը մասնակցել են 6 հավակնորդներ,[7] իսկ հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության ենթաբաժնի որակավորման ստուգմանը՝ 11 հավակնորդներ:[8]

– 2023 թվականի փետրվարի 10-ին կայացած դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի կոռուպցիոն հանցագործությունների քննության ենթաբաժինը՝ 2 թեկնածուով համալրելու նպատակով անցկացված որակավորման գրավոր քննությունը:[9] Որակավորման ստուգմանը մասնակցել է 1 հավակնորդ:[10]

– 2023 թվականի սեպտեմբերի 26-ին կայացած դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի կոռուպցիոն հանցագործությունների քննության և հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության ենթաբաժինները մեկական թեկնածուներով համալրելու նպատակով անցկացված որակավորման գրավոր քննությունը:[11] Հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի կոռուպցիոն հանցագործությունների քննության ենթաբաժնի որակավորման ստուգմանը մասնակցել են 3 հավակնորդներ,[12] իսկ հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության ենթաբաժնի որակավորման ստուգմանը՝ 1 հավակնորդ:[13] 2024 թվականի հունվարի 30-ին կայացած, առանց համալրման ենթակա տեղերի քանակի սահմանափակման, դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի կոռուպցիոն հանցագործությունների քննության և հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության ենթաբաժինների համալրման նպատակով անցկացված

[7] Տե՛ս https://court.am/hy/news/981
[8] Տե՛ս https://court.am/hy/official-inner/346
[9] Տե՛ս https://court.am/hy/official-inner/355
[10] Տե՛ս https://court.am/hy/official-inner/379
[11] Տե՛ս https://court.am/hy/official-inner/419
[12] Տե՛ս https://court.am/hy/official-inner/465
[13] Տե՛ս https://court.am/hy/official-inner/466

որակավորման գրավոր քննությունը:[14] Հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության որակավորման ստուգմանը մասնակցել են 2 հավակնորդներ,[15] իսկ կոռուպցիոն հանցագործությունների քննության ենթաբաժնի որակավորման ստուգմանը՝ 5 հավակնորդներ:[16]

1.3 Որակավորման ստուգման գրավոր քննության ընթացքը

Որակավորման քննություններից առաջ դատական իշխանության պաշտոնական կայքէջում հրապարակվել են դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժինների համալրման անհրաժեշտության մասին համապատասխան որոշումը, առկա թափուր հաստիքների քանակը, որակավորման գրավոր քննության ժամանակի և վայրի, ինչպես նաև գրավոր քննության առաջադրանքների նմուշ-օրինակների մասին հայտարարությունները:

Որակավորման գրավոր քննությունների ընթացքում Կազմակերպության ներկայացուցչից բացի ներկա են եղել Արդարադատության նախարարության ներկայացուցիչ, որոշ որակավորման ստուգումներին նաև՝ Փաստաբանական պալատի ներկայացուցիչ:

Դիտարկված բոլոր որակավորման ստուգումները՝ և՛ գրավոր քննությունները, և՛ հարցազրույցի փուլերը անց են կացվել Բարձրագույն դատական խորհրդի վարչական շենքում:

Հավակնորդների կողմից վիճակահանությամբ՝ նախապես պատրաստված, թվակալված թղթերը ընտրելու միջոցով, որոշվել են նրանց քննական սեղանների համարները: Քննության ընթացքում Լիազոր մարմնի կողմից ներկայացվել են ընթացակարգային կանոններն ու սահմանափակումները,[17] ինչպես նաև պարզաբանվել է, որ յուրաքանչյուր պատասխանի դիմաց պետք է նշվի միայն

[14] Տե՛ս https://court.am/hy/official-inner/478
[15] Տե՛ս https://court.am/hy/news/1704
[16] Տե՛ս https://court.am/hy/news/1705
[17] Տե՛ս https://court.am/hy/decisions-single/1479

համապատասխան «X» նշանը՝ ընտրություն կատարելու համար։ Նախքան քննության մեկնարկը, պրոեկտորի միջոցով ցուցադրվել են հավակնորդների համար նախատեսված շտրիխ կոդերը և դրանց՝ պատահական ընտրության գործընթացը։
Քննության տևողությունը սահմանվել է 6 ժամ։ Այն դեպքում, երբ հավակնորդների կողմից «X» նշանը վանդակից դուրս է նշվել, համապատասխան գրավոր աշխատանքի տվյալ էջը փոխվել է, և նորից նույնությամբ նշվել՝ դիտորդի ներկայությամբ։ Քննական ողջ գործընթացի նկարահանումը իրականացվել է ԲԴԽ աշխատակազմի կողմից։ Որակավորման ստուգման ընթացքում լրատվամիջոցների ներկայացուցիչներ ներկա չեն եղել։ Քննության ընթացքում նկարահանվել է նաև քննության ավարտին քննական տուփը փակելու գործընթացը։
Անդրադառնալով քննության տեխնիկական մասին՝ յուրաքանչյուր հավակնորդի տրամադրվել է ջուր և բաժակ։ Հավակնորդներին տրվել են նաև սևագրեր, որոնք ավելացվել են՝ ըստ անհրաժեշտության։ Հավակնորդներին թույլատրվել է իրենց կողմից օգտագործված սևագրերը վերցնել իրենց հետ՝ ըստ ցանկության։ Քննության ավարտից հետո սեղանին դրված սևագրերը ոչնչացվել են հատուկ սարքի միջոցով։ Քննության ընթացքում հավակնորդներին քննասենյակից դուրս գալ թույլատրվել է միայն կարգադրիչների ուղեկցությամբ։
Որակավորման գրավոր քննությունների արդյունքները հրապարակվել են տարբեր ժամանակահատվածներում՝ ըստ քննությունների հաջորդականության։ Այսպես՝

- 2022 թվականի հոկտեմբերի 11-ին կայացած որակավորման ստուգումների գրավոր արդյունքները հրապարակվել են քննությունից 1 աշխատանքային օր հետո։[18]
- 2023 թվականի փետրվարի 10-ին կայացած որակավորման ստուգումների գրավոր արդյունքները հրապարակվել են քննությունից 6 աշխատանքային օր հետո։[19]

[18] Տե՛ս https://court.am/hy/news/981
[19] Տե՛ս https://court.am/hy/official-inner/379

- 2023 թվականի սեպտեմբերի 26-ին կայացած որակավորման ստուգումների գրավոր արդյունքները հրապարակվել են քննությունից 4 աշխատանքային օր հետո:[20]
- 2024 թվականի հունվարի 30-ին կայացած որակավորման ստուգումների գրավոր արդյունքները հրապարակվել են քննությունից 4 աշխատանքային օր հետո:[21]

Որակավորման գրավոր ստուգմանը մասնակցած 29 հավակնորդից անցողիկ շեմը հաղթահարել և հարցազրույցի փուլ են անցել 17 հավակնորդներ:

Որակավորման գրավոր ստուգման անցողիկ միավոր սահմանված է 48-ը, ընդ որում՝ հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության ենթաբաժնի հավակնորդը պարտադիր պետք է հավաքի նյութական իրավունքի թեստերի համար՝ 30 միավոր, իսկ դատավարական իրավունքի թեստերի համար՝ 18 միավոր, իսկ կոռուպցիոն հանցագործությունների քննության ենթաբաժնի հավակնորդը պարտադիր պետք է նյութական և դատավարական իրավունքի թեստերի համար հավաքի 24-ական միավոր:[22]

Հատկանշական է, որ եղել է դեպք, երբ հավակնորդներից երկուսը՝ հաղթահարելով քննության համար նախատեսված անցողիկ շեմը, այնուամենայնիվ, ընդգրկված չեն եղել հարցազրույցի փուլ անցած հավակնորդների ցուցակում՝ չբավարարելով նյութական և դատավարական իրավունքի թեստերի համար անհրաժեշտ միավորները:[23]

---

[20] Տե՛ս https://court.am/hy/official-inner/466
https://court.am/hy/official-inner/465

[21] Տե՛ս https://court.am/hy/news/1705
https://court.am/hy/news/1704

[22] Տե՛ս https://court.am/hy/decisions-single/1479

[23] Տե՛ս https://court.am/hy/official-inner/346 / https://court.am/hy/official-inner/335

1.4 Որակավորման գրավոր քննության արդյունքների գնահատումը

Գրավոր առաջադրանքները գնահատվում են Բարձրագույն դատական խորհրդի սահմանած չափորոշիչներով միավորների սանդղակով, իսկ գնահատման հանձնաժողովի բոլոր անդամները պարտավոր են ստուգել բոլոր աշխատանքները Բարձրագույն դատական խորհրդի սահմանած կարգով: Հավակնորդների գրավոր աշխատանքները տրամադրվում են գնահատման հանձնաժողովին անանուն՝ ծածկագրված վիճակում: Հանձնաժողովի անդամները պետք է ապահովված լինեն գնահատման չափորոշիչներին համապատասխան միավորների սանդղակով և ուղենիշային տիպային պատասխաններով, իսկ թեստային առաջադրանքների դեպքում՝ առաջադրանքների առաջարկվող ճիշտ լուծումներով: Գնահատման ընթացքում նրանք չեն կարող քննարկել աշխատանքների գնահատականներն ու հիմնավորումները: Գրավոր քննության արդյունքների հրապարակումից հետո քննություն հանձնած անձը դիմում ներկայացնելուց հետո հաջորդող օրվա ընթացքում ստանում է իր աշխատանքը:

Դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի կոռուպցիոն հանցագործությունների քննության ենթաբաժնի համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության աշխատանքների ստուգման և գնահատման հանձնաժողովի կազմում ներգրավված են եղել 5 դատավոր անդամներ և 2 իրավաբան գիտնական անդամներ:[24]

[24] Տե՛ս Ե/135 ելքային գրության Ե 9466 պատասխանը գնահատման հանձնաժողովի կազմի վերաբերյալ:
Գնահատման հանձնաժողովի վերաբերյալ.pdf
Տե՛ս https://court.am/hy/decisions-single/1520



1.5 Գրավոր քննության արդյունքների բողոքարկում

Համաձայն Դատական օրենսգրքի՝ գրավոր քննության արդյունքները կարող են բողոքարկվել բողոքարկման հանձնաժողով՝ դրանք հրապարակելուց հետո՝ տասնհինգօրյա ժամկետում:[25] Բարձրագույն դատական խորհրդի ԲԴԽ-85-Ո-279 և ԲԴԽ-13-Ո-49 որոշումներով սահմանված է, սակայն, բողոքարկման համար ավելի կարճ ժամանակահատված՝ հնգօրյա ժամկետ[26] :

Այսպես, քննարկվող որոշումներում առկա է բողոքարկման իրավունքի իրացման անհամապատասխանություն գրավոր քննությունների բողոքարկման առնչությամբ» Խորհրդի կողմից սահմանվել է ավելի կարճ ժամկետ, քան սահմանված է Դատական օրենսգրքում, ինչը մի կողմից՝ ոչ բարենպաստ վիճակ է ստեղծում թեկնածուների ընթացակարգային իրավունքների համար, մյուս կողմից՝ լուրջ մտահոգություն է առաջացնում ԲԴԽ կողմից սահմանադրական օրենքի դրույթները շրջանցելու առնչությամբ:

[25] Տե՛ս Դատական օրենսգիրք, հոդված 105.1:

[26] Տե՛ս https://court.am/hy/decisions-single/1479
https://court.am/hy/decisions-single/1719

Գրավոր քննությունների արդյունքներից հետո քննության արդյունքները բողոքարկել են հավակնորդներից 10-ը, ինչի արդյունքում 6 հավակնորդների գրավոր աշխատանքների գնահատականներում տեղի է ունեցել փոփոխություն, որի արդյունքում 2 հավակնորդներ հաղթահարել են գրավոր քննության փուլը:[27]

Բողոքարկման արդյունքների հրապարակումից հետո՝ ԲԴԽ-ի կողմից հրապարակվել է հարցազրույցի փուլ անցած հավակնորդների միասնական ցուցակը, որից հետո հրապարակվել է հարցազրույցի ժամանակի մասին տեղեկատվությունը:

2. ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՓՈՒԼ

Դիտարկված որակավորման ստուգումներից միայն 2022 թվականի հոկտեմբերի 11-ին կայացած դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով մասնագիտացման ենթաբաժինը և կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերով մասնագիտացման ենթաբաժինը համալրելու նպատակով անցկացված, որակավորման ստուգմանը մասնակցած թեկնածուներն են անցել հոգեբանական թեստավորման փուլը:[28]

2022 թվականի դեկտեմբերի 23-ին Դատական օրենսգիրք սահմանադրական օրենքում ընդունված օրենսդրական փոփոխություններով, հոգեբանական թեստավորման փուլը հանվել է դատավորների թեկնածուների որակավորման ստուգման գործընթացից՝ դրանց վերաբերյալ օրենսդրական կարգավորումները ճանաչելով ուժը կորցրած:

Հոգեբանական թեստավորման արդյունքները Բարձրագույն դատական խորհրդի համար կրել են խորհրդատվական նշանակություն: Սակայն հոգեբանական

[27] Բողոքարկման արդյունքները տե՛ս https://court.am/hy/official-inner/338
Տե՛ս https://court.am/hy/official-inner/337
Տե՛ս https://court.am/hy/official-inner/468

[28] Տե՛ս https://court.am/hy/official-inner/343

թեստավորման նպատակը հավակնորդի էմոցիոնալ ինտելեկտը, բարոյական դատողությունը, արժեքային համակարգը գնահատելն է, ինչը մասնագիտական մեթոդաբանություն և գիտելիքներ է պահանջում և կարող է իրականացվել բացառապես հոգեբան մասնագետների կողմից: Հետևաբար, հոգեբանական թեստավորման փուլի բացառումը խնդրահարույց է:

3. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՓՈՒԼԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

3.1. Նախնական հարցազրույց

Հակակոռուպցիոն դատարանի համապատասխան մասնագիտացման դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակի համալրման նպատակով Բարձրագույն դատական խորհրդում հարցազրույց անցկացնելուց առաջ իրականացվում է նախնական հարցազրույց հավակնորդների և փորձագետների միջև: Նախնական հարցազրույցի նպատակը փորձագետների կողմից հավակնորդի՝ դատավոր դառնալու շարժառիթի ու ակնկալիքի, անձնական հատկանիշների, դատավորի վարքագծի կանոններին, շահերի բախմանը վերաբերող իրավիճակում ձեռնարկվելիք գործողությունների, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ներկայացրած բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացության տվյալների առնչությամբ հարցեր տալու միջոցով հավակնորդի վերաբերյալ ԲԴԽ-ին գրավոր խորհրդատվական կարծիքի տրամադրումն է: Նախնական հարցազրույցից հինգ օր առաջ ԲԴԽ-ն փորձագետներին է տրամադրում հավակնորդի անձնական գործը, որն ընդգրկում է հայտին կից փաստաթղթերը, գրավոր քննության արդյունքները, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի բարեվարքության եզրակացությունը և այլ տեղեկություններ: Հարցազրույցից երկու օր առաջ փորձագետները ներկայացնում են իրենց գրավոր խորհրդատվական կարծիքը:[29]

[29] Տե՛ս Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 14.04.2021 թվականին ընդունված և 29.10.2021

Կազմակերպությունը հարցում է կատարել Դատական դեպարտամենտին նախնական հարցազրույցի իրականացման նպատակով ներգրավված փորձագետների վերաբերյալ, որի համաձայն՝ 2022 թվականի նոյեմբերի 14-ին, 15-ին 16-ին կայացած որակավորման ստուգման գործընթացի նախնական հարցազրույցին որպես ազգային փորձագետ ներգրավված է եղել Վաղարշ Աղաբեկյանը և միջազգային փորձագետ Վիտալի Կասկոն, իսկ 2023 թվականի մարտի 20-ին և նոյեմբերի 23-ին՝ համապատասխանաբար Վաղարշ Աղաբեկյանը և Աննա Մարալյանը:[30] 2024 թվականի սպրիլի 17-ին, 19-ին, 23-ին և 26-ին որպես ներգրավված են եղել համապատասխանաբար ազգային փորձագետ Արտաշես Սերգոյանը և միջազգային փորձագետ Աննա Մարալյանը:

3.2. Բարձրագույն դատական խորհրդի կողմից անցկացվող հարցազրույցի փուլ. Իրավակարգավորումներ

Նախնական հարցազրույցի փուլին հաջորդում է Բարձրագույն դատական խորհրդում հարցազրույցի փուլը, որն իրականացնում են ԲԴԽ անդամները: Հարցազրույցին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել նաև հոգեբան:[31] Որակավորման ստուգումների հարցազրույցի փուլերին հոգեբան մասնակցել է միայն 2022 թվականի նոյեմբերի 21-ին կայացած հարցազրույցի փուլին, որով ներգրավված հոգեբանները եղել են եղել Լիլիթ Կարապետյանը և Լիլիթ Բաղդասարյանը:[32]

Հավակնորդների կողմից հարցերի ընտրությունը կատարվում է վիճակահանությամբ՝ քննական տոմսի ընտրության միջոցով: Հարցազրույցի փուլի ընթացքում թեկնածուներին տրվում է 30 րոպե ժամանակ հարցատոմսերին

թվականին ուժի մեջ մտած թիվ ՀՕ-331-Ն սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 12,13 և 14-րդ կետերը:

[30] Գրության պատասխան Ե-9458:

[31] Տե՛ս դատական օրեսգիրք, հոդված 108:

[32] Գրության պատասխան ԴԴ-1 Ե-5855:

պատրաստվելու համար: Յուրաքանչյուր հավակնորդի հետ հարցազրույցի առավելագույն տևողությունը մեկ ու կես ժամ է:

Հարցազրույցը կազմված էր երկու մասից՝

- յուրաքանչյուր հավակնորդի անձնական գործի, ներառյալ՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած խորհրդատվական եզրակացության և անցած մասնագիտական փորձի ուսումնասիրություն, որը ներկայացնելու համար Բարձրագույն դատական խորհրդի անդամներից մեկը խորհրդում հանդես է գալիս որպես զեկուցող: Հավակնորդն իրավունք ունի պարզաբանումներ տալու իր անձնական գործում առկա տեղեկությունների վերաբերյալ: Դատավորի պաշտոնում արդյունավետ գործելու համար անհրաժեշտ այլ անձնական հմտություններն ու որակները գնահատելու նպատակով Բարձրագույն դատական խորհրդի անդամները կարող են հարցեր տալ հավակնորդին համապատասխան հոդվածում նշված հատկանիշների, իսկ գիտությունների թեկնածու հավակնորդին՝ նաև նրա գիտական հետազոտությունների ոլորտի մասին,
- դատավորի վարքագծի կանոններին վերաբերող հիպոթետիկ խնդրի վերաբերյալ հավակնորդի կողմից իրականացվող վերլուծություն և դիրքորոշման ներկայացում՝ դատավորի վարքագծի հիմնարար կանոնների, դատավորին ներկայացվող պահանջների և որպես դատավոր գործելու համար կարևոր այլ անձնական հատկանիշները գնահատելու համար:[33]

Դատական օրենսգրքում կատարված օրենսդրական փոփոխության արդյունքում[34]՝ հարցազրույցի փուլը կազմված է երեք մասից՝ գործող երկու փուլերին ավելանալով նոր փուլ՝ համապատասխան մասնագիտացման ոլորտում մեկ հակիրճ իրավական հարցի վերաբերյալ (օրենքի կամ այլ իրավական ակտի, այդ թվում՝ հիպոթետիկ իրավական նորմ, դատական ակտում արտահայտված դիրքորոշում, տեսության մեջ

[33] Դատական օրենսգիրք, հոդված 108:
[34] Օրենսդրական փոփոխությունը տե՛ս ԱԺ,23.12.2022,ՀՕ-575-Ն

արտահայտված իրավական կարծիքներ և այլն) հավակնորդի կողմից իրականացվող վերլուծություն ու դիրքորոշման ներկայացում՝ կարճ ժամանակահատվածում հանպատրաստից կողմնորոշվելու, ինքնատիրապետման, վարվեցողության, հաղորդակցման հմտությունները, վերլուծական կարողությունները և դատավորի պաշտոնում արդյունավետ գործելու համար անհրաժեշտ այլ հմտություններն ու որակները գնահատելու համար:[35]

3.3. Դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում իրավագիտության բնագավառում գիտական աստիճան ունեցող անձի, ինչպես նաև իրավաբան գիտնականի ընդգրկման կարգը

Համաձայն Դատական օրենսգրքի 106-րդ հոդվածի՝ դատավորի թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկվելու համար Բարձրագույն դատական խորհուրդ հայտ ներկայացնելու իրավունք ունի Դատական օրենսգրքի 97-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ և 6-րդ կետերով սահմանված պահանջները բավարարող, և վերջին 10 տարվա ընթացքում մասնագիտական աշխատանքի առնվազն ութ տարվա փորձառություն ունեցող անձը: Իրավագիտության բնագավառում գիտական աստիճան ունեցող և վերջին 10 տարվա ընթացքում առնվազն հինգ տարի բարձրագույն ուսումնական հաստատությունում կամ «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում, «Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիա» հիմնադրամում իրավունք դասավանդած կամ գիտական հաստատությունում գիտական աշխատանք կատարած անձը (այսուհետ՝ գիտական աստիճան ունեցող հավակնորդ):

Նշված հոդվածի դրույթներին համապատասխանող հավակնորդը սահմանված կարգով անցնում է որակավորման ստուգման հարցազրույցի փուլը:

[35] Սույն զեկույցի շրջանակներում հարցազրույցի փուլերը անցացվել են և՛ երկու փուլով և՛ երեք՝ ըստ որակավորման քննության ժամանակահատվածում գործող օրենսդրության:

Դատական օրենսգրքի 106-րդ հոդվածի հիմքով՝ որակավորման ստուգման հարցազրույցի փուլերին մասնակցել են 17 հավակնորդ, որոնցից 16-ը հարցազրույցին մասնակցել են վերջին 10 տարվա ընթացքում մասնագիտական աշխատանքի առնվազն ութ տարվա փորձառություն ունենալու հիմքով, 1 թեկնածու՝ իրավագիտության բնագավառում գիտական աստիճան ունենալու հիմքով:



3.4. Դիտարկված հարցազրույցի փուլեր

Կազմակերպության կողմից դիտարկվել են դատավորների թեկնածուների համապատասխան մասնագիտացման բաժնի համալրման նպատակով անցկացված որակավորման ստուգումների հարցազրույցի փուլերը: Մասնավորապես՝

- **2022 թվականի նոյեմբերի 21-ին** տեղի ունեցած դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության և կոռուպցիոն հանցագործությունների քննության ենթաբաժինները համալրելու նպատակով անցկացված հարցազրույցի փուլը, որին մասնակցել է 10 հավակնորդ՝ 9 հավակնորդ հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության ենթաբաժնից, որից 1 հավակնորդ հանդիսացել է իրավաբան գիտնական և հարցազրույցի փուլին մասնակցել է Դատական օրենսգրքի 106-րդ հոդվածի հիմքով, իսկ 1

հավակնորդ՝ կոռուպցիոն հանցագործությունների քննության ենթաբաժնից: Կոռուպցիոն հանցագործությունների քննության ենթաբաժինը համալրելու համար անցկացվել է հարցազրույցի փուլ նաև գործող դատավորների համար: Հիշյալ հարցազրույցի փուլին մասնակցել են 4 դատավորներ:[36]

- **2023 թվականի մարտի 27-ին** տեղի ունեցած դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի կոռուպցիոն հանցագործությունների քննության ենթաբաժնի համալրման նպատակով անցկացված հարցազրույցի փուլը, որին մասնակցել է 2 հավակնորդներ, որոնցից 1-ը մասնակցել է հարցազրույցի փուլին՝ վերջին 10 տարվա ընթացքում մասնագիտական աշխատանքի առնվազն ութ տարվա փորձառության հիմքով:[37]
- **2023 թվականի նոյեմբերի 27-ին** տեղի ունեցած դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության և կոռուպցիոն հանցագործությունների քննության ենթաբաժինները համալրելու նպատակով անցկացված հարցազրույցի փուլը, որին մասնակցել է 6 հավակնորդներ՝ 5 հավակնորդ հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության ենթաբաժնից, որոնցից 4-ը հարցազրույցին մասնակցել են վերջին 10 տարվա ընթացքում մասնագիտական աշխատանքի առնվազն ութ տարվա փորձառության հիմքով, իսկ 1-ը՝ կոռուպցիոն հանցագործությունների քննության ենթաբաժնից, ով հանդիսացել է դատավոր,[38]
- **2024 թվականի ապրիլի 30-ին** տեղի ունեցած դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն

[36] Տե՛ս https://court.am/hy/official-inner/336
https://court.am/hy/official-inner/335
https://court.am/hy/official-inner/342
[37] Տե՛ս https://court.am/hy/official-inner/379
[38] Տե՛ս https://court.am/hy/official-inner/467
https://court.am/hy/official-inner/469

քաղաքացիական գործերի քննության և կոռուպցիոն հանցագործությունների քննության ենթաբաժինները համալրելու նպատակով անցկացված հարցազրույցի փուլը, որին մասնակցել է 16 հավակնորդ՝ 7 հավակնորդ հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության ենթաբաժնից, որոնցից 6-ը հարցազրույցին մասնակցել են վերջին 10 տարվա ընթացքում մասնագիտական աշխատանքի առնվազն ութ տարվա փորձառության հիմքով,[39] իսկ 9 հավակնորդ՝ կոռուպցիոն հանցագործությունների քննության ենթաբաժնից, որոնցից 5-ը հարցազրույցին մասնակցել են վերջին 10 տարվա ընթացքում մասնագիտական աշխատանքի առնվազն ութ տարվա փորձառության հիմքով:[40]



Հարցազրույցի փուլին մասնակցել են նաև 5 գործող դատավորներ,[41] որոնցից 1-ի հարցազրույցը հնարավոր է եղել դիտարկել, սակայն վերջինիս վերաբերյալ

[39] Հարկ է նշել, որ թեկնածուներից մեկը, ով գրավոր փուլի արդյունքներով անցել էր հարցազրույցի փուլ՝ չէր ներկայացել հարցազրույցին:

[40] Տե՛ս https://court.am/hy/official-inner/491
https://court.am/hy/official-inner/490
Հարկ է նշել, որ Դատական օրենսգրքի 106-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով դիմած թեկնածուներից մեկը հարցազրույցին չէր ներկայացել:

[41] «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 14.04.2021 թվականին ընդունված և 29.10.2021 թվականին ուժի մեջ մտած թիվ ՀՕ-331-Ն սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 8-րդ և 10-րդ մասեր:

Բարձրագույն դատական խորհրդի զեկուցող անդամի կողմից ընթերցվել են միայն դատավորի կենսագրական տվյալները, իսկ Խորհրդի անդամները դատավորին հարցեր չեն ունեցել։

3.5. Հարցազրույցի ընթացքը

Դիտարկված հարցազրույցների ընթացքում հավակնորդներին առաջադրված իրավական խնդիրները հաճախ չէին բարձրաձայնվում, այլ տրվում էին միայն դրանց պատասխանները, ինչը բարդացնում է օբյեկտիվ դիտորդի կողմից հարցերին կամ խնդիրներին տրված պատասխանների ըմբռնումն ու գնահատումը։

2022 թվականի նոյեմբերի 21-ին տեղի ունեցած դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության և կոռուպցիոն հանցագործությունների քննության ենթաբաժինները համալրելու նպատակով անցկացված հարցազրույցի փուլին մասնակցել է նաև հոգեբան, ինչպես նաև Խորհրդի կողմից հնչել են նաև հոգեբանական հարցեր։[42]

Ըստ Բարձրագույն դատական խորհրդի ԲԴԽ-40-Ո-110 որոշման՝ դատավորների թեկնածուների հավակնորդների միասնական համալրված ցուցակում ընդգրկված անձանց հետ հարցազրույցի կազմակերպման և անցկացման ժամանակ առկա է գնահատման ենթակա հատկանիշների հարցաթերթի ձև։ Հարցաթերթն իր մեջ ներառում է այնպիսի հատկանիշների գնահատում, ինչպիսիք են մասնագիտական աշխատանքի փորձառությունը, դատավոր դառնալու շարժառիթն ու ակնկալիքը, դատավորի կարգավիճակին վերաբերող իրավական ակտերի պահանջներին տեղեկացվածությունը, ինքնատիրապետումը, բարեվարքությունը, վարվեցողությունը, հեղինակության (ազդեցության) չափավոր կիրառումը, պատասխանատվության զգացումը, ունկնդրելու կարողությունը, հաղորդակցվելու

[42] Հոգեբանական և այլ հարցերը տե՛ս Հավելված 1-ում։

հմտությունները, արդարամտությունը, վերլուծական կարողությունները, կարճ ժամանակահատվածում հանպատրաստից կողմնորոշվելու կարողությունը և դատավորի պաշտոնում արդյունավետ գործելու համար անհրաժեշտ գիտելիքների առկայությունը միասնական ցուցակում որպես գիտական աստիճան ունեցող անձ ընդգրկված հավակնորդի դեպքում):[43]

Նշված գնահատման համակարգից պարզ չէ, թե ԲԴԽ-ն ինչպես է գնահատում թեկնածուներին, եթե յուրաքանչյուր թեկնածուին հնչեցվում են տարբեր հարցեր և գնահատման ենթակա ոչ բոլոր հատկանիշների առնչությամբ են հարցեր տրվում բոլոր հավակնորդներին: Օրինակ, 2022 թվականի նոյեմբերի 21-ին կայացած հարցազրույցի փուլին մասնակցած 10 թեկնածուներից միայն 3 թեկնածուի է հարցեր հնչեցվել դատավոր դառնալու շարժառիթի վերաբերյալ, իսկ դատավորի հատկանիշների վերաբերյալ հարցեր հնչեցվել միայն թեկնածուներից 3-ին:

Դատական օրենսգրքում կատարված օրենսդրական փոփոխության արդյունքում[44]՝ հարցազրույցի փուլը կազմված է երեք մասից՝ նախկինում գործող երկու փուլերին ավելանալով նոր փուլ՝ համապատասխան մասնագիտացման ոլորտում մեկ հակիրճ իրավական հարցի վերաբերյալ հավակնորդի կողմից իրականացվող վերլուծություն ու դիրքորոշման ներկայացում:[45]

Օրենսդրական փոփոխության արդյունքում՝ հարցազրույցների ընթացքում հոգեբանի մասնակցության իմպերատիվ պահանջ այլևս նախատեսված չէ, և յուրաքանչյուր դեպքում հոգեբանի ներգրավման անհրաժեշտությունը որոշվում է Բարձրագույն դատական խորհրդի կողմից:[46]

---

[43] Տե՛ս https://www.irtek.am/views/act.aspx?aid=96569

[44] Օրենսդրական փոփոխությունը տե՛ս ԱԺ,23.12.2022,ՀՕ-575-Ն

[45] Սույն զեկույցի շրջանակներում հարցազրույցի փուլերը անցացվել են և՛ երկու փուլով և՛ երեք՝ ըստ որակավորման քննության ժամանակահատվածում գործող օրենսդրության:

[46] «Հայաստանի հանրապետության Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 23.12.2022 թվականին ընդունված և 07.01.2023 թվականին ուժի մեջ մտած ՀՕ-575-Ն սահմանադրական օրենքի 21-րդ հոդված:

3.6. Բարձրագույն դատական խորհրդի կողմից բարեվարքության վերաբերյալ տրված հարցադրումներ

Բարեվարքության ստուգման վերաբերյալ Խորհրդի հարցադրումները հիմնականում վերաբերել են՝

- հավակնորդի կարգապահական տույժերին, ինչպես նաև այդ պահին ընթացքի մեջ գտնվող կարգապահական վարույթին,
- հավակնորդի գույքերի անհամապատասխանությանը, եկամուտը ավելի քիչ է եղել, քան ծախսերը։
- հավակնորդի՝ որոշակի տարիների ծախսերի գերազանցումը եկամուտներին, ծնողների գույքի չհայտարարագրումը։

3.7. Բարձրագույն դատական խորհրդի կողմից հարցազրույցի գնահատում

Համաձայն Դատական օրենսգրքի 108-րդ հոդվածի՝ հարցազրույցի ժամանակ Բարձրագույն դատական խորհրդի անդամներին տրամադրվում է հարցաթերթ, որտեղ նշվում են համապատասխան հոդվածով և Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ սահմանված գնահատման ենթակա հատկանիշները: Բարձրագույն դատական խորհրդի յուրաքանչյուր անդամ իր ներքին համոզմամբ գնահատում է յուրաքանչյուր հավակնորդի՝ նշելով իր նկատառումները գնահատվող հատկանիշների վերաբերյալ:

Հարցազրույցների ավարտից հետո ԲԴԽ անդամներն իրականացնում են հարցազրույցի արդյունքների ամփոփիչ քննարկում, որին հաջորդում է քվեարկությունը դռնփակ նիստում: Այս քննարկումը չի դիտարկվում և ենթակա չէ հանրային վերահսկողության:

Դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակը կազմելու համար քվեարկությունն իրականացնելիս Բարձրագույն դատական խորհրդի անդամները հաշվի են առնում որակավորման գրավոր քննության և հարցազրույցի արդյունքները,

ինչպես նաև հավակնորդի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը:[47] Հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի և վերաքննիչ քաղաքացիական և քրեական դատարանների առաջխաղացման ենթակա համապատասխան մասնագիտացման դատավորների թեկնածուների ցուցակը կազմելու համար քվեարկությունն իրականացնելիս Բարձրագույն դատական խորհրդի անդամները հաշվի են առնում նաև փորձագետների ներկայացրած գրավոր խորհրդատվական կարծիքը: Սույն նորմը սահմանված է Դատական օրենսգրքի հատուկ կարգավորումներում և արտացոլված չէ օրենսգրքի ընդհանուր դրույթներում:[48] Նշված օրենսդրական պահանջը հիմնական նորմում արտացոլված չէ, այլ նախատեսված է անցումային դրույթներում՝ ինչը կարծում ենք դժվարացնում է նորմի հասանելիությունը:

Անդրադառնալով հարցազրույցի փուլը հաղթահարած թեկնածուների ընտրությանը՝ հարկ է նշել, որ ԲԴԽ-ի կողմից հրապարակվում են միայն դատավորների թեկնածուների համապատասխան ցուցակներում ներգրավված անձանց անունները, որոշ դեպքերում՝ նաև ստացած կողմ դեմ ձայների հարաբերակցությունը: ԲԴԽ-ի կողմից թեկնածուների ընտրության վերաբերյալ պատճառաբանված որոշում չի հրապարակվում:

Գործնականում ԲԴԽ-ն չի պատճառաբանում անձին դատավորների թեկնածուների ցուցակում ներառելու մասին որոշումները:

Անդրադառնալով որակավորման ստուգման հարցազրույցի փուլերը հաղթահարած հավակնորդներին, ապա՝

---

[47] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 14.04.2021 թվականին ընդունված և 29.10.2021 թվականին ուժի մեջ մտած թիվ ՀՕ-331-Ն սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 14-րդ մասը:

[48] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 14.04.2021 թվականին ընդունված և 29.10.2021 թվականին ուժի մեջ մտած թիվ ՀՕ-331-Ն սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 16-րդ մասը:

- **2022 թվականի նոյեմբերի 21-ին** տեղի ունեցած դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության և կոռուպցիոն հանցագործությունների քննության ենթաբաժինները համալրելու նպատակով անցկացված հարցազրույցի փուլը հաղթահարել են 12 հավակնորդներից 3-ը:[49]
- **2023 թվականի մարտի 27-ին** տեղի ունեցած դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության և կոռուպցիոն հանցագործությունների քննության ենթաբաժինները համալրելու նպատակով անցկացված հարցազրույցի փուլը հաղթահարել է 2 հավակնորդներից 1-ը:[50]
- **2023 թվականի նոյեմբերի 27-ին** տեղի ունեցած դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության և կոռուպցիոն հանցագործությունների քննության ենթաբաժինները համալրելու նպատակով անցկացված հարցազրույցի փուլը հաղթահարել են 7 հավակնորդների միայն 2-ը:[51]
- **2024 թվականի ապրիլի 30-ին** տեղի ունեցած դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության և կոռուպցիոն հանցագործությունների քննության ենթաբաժինները համալրելու նպատակով անցկացված հարցազրույցի փուլը հաղթահարել են 17 հավակնորդներից միայն 6-ը:[52]

---

[49] Տե՛ս https://court.am/hy/news/1075
[50] Տե՛ս https://court.am/hy/decisions-single/1809
[51] Տե՛ս https://www.facebook.com/photo/?fbid=654602393527327&set=a.181352554185649
[52] Տե՛ս https://www.facebook.com/reel/1479826209605962

3.8. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տրված բարեվարքության եզրակացություններ

3.8.1 Հարցազրույցի փուլ անցած հավակնորդների բարեվարքության վերաբերյալ տեղեկատվություն

Կազմակերպությունը հարցում է կատարել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին, որով խնդրել է տրամադրել տեղեկություն, թե 2022 թվականի նոյեմբերի 21-ին, 2023 թվականի մարտի 27-ին, 2023 թվականի նոյեմբերի 27-ին տեղի ունեցած յուրաքանչյուր որակավորման ստուգման արդյունքում գրավոր փուլը հաղթարած և հարցազրույցի փուլ անցած թեկնածուներից քանիսի՞ վերաբերյալ է Հանձնաժողովի խորհրդատվական եզրակացությունը եղել «դրական», «դրական վերապահումով» և «բացասական»՝ ըստ մասնագիտացման և առանց անձնական տվյալների ներկայացման: Ի պատասխան հարցմանը՝ ԿԿՀ-ն տրամադրել է տեղեկություն, համաձայն որի՝

- Հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության ենթաբաժինը համալրելու նպատակով հարցազրույցի փուլ անցած թվով 14 հավակնորդներից թվով 8-ի վերաբերյալ Հանձնաժողովը տրամադրել է դրական, թվով 5-ի վերաբերյալ՝ դրական՝ վերապահումով, 1-ի վերաբերյալ՝ բացասական եզրակացություն:

Թվով 4 դրական՝ վերապահումով եզրակացությունների համար հիմք են հանդիսացել թեկնածուների գույքային դրության առնչությամբ արձանագրված անհամապատասխանությունները, թվով 1-ի համար՝ աշխատանքային գործունեության ընթացքում դրսևորած վարքագիծը:

Բացասական եզրակացության համար հիմք են հանդիսացել թեկնածուի գույքային դրության առնչությամբ արձանագրված անհամապատասխանությունները:

- Հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի կոռուպցիոն հանցագործությունների քննության ենթաբաժինը համալրելու նպատակով

հարցազրույցի փուլ անցած թվով 6 հավակնորդներից թվով 3-ի վերաբերյալ Հանձնաժողովը տրամադրել է դրական, թվով 2-ի վերաբերյալ՝ դրական՝ վերապահումով, 1-ի վերաբերյալ՝ բացասական եզրակացություն։

- Թվով 2 դրական՝ վերապահումով եզրակացություններից մեկի համար հիմք են հանդիսացել թեկնածուի գույքային դրության առնչությամբ արձանագրված անհամապատասխանությունները, թվով 1-ի համար՝ աշխատանքային գործունեության ընթացքում դրսևորած վարքագիծը։

Բացասական եզրակացության համար հիմք են հանդիսացել թեկնածուի՝ աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև զանգվածային լրատվական միջոցներում հրապարակված տեղեկությունները՝ համադրությամբ։

Անդրադառնալով 2024 թվականի ապրիլի 30-ին կայացած հարցազրույցի փուլի վերաբերյալ կազմակերպության հարցմանը՝ ապա

- Դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի կոռուպցիոն հանցագործությունների քննության ենթաբաժինը համալրելու նպատակով հարցազրույցի փուլ անցած 10 թեկնածուներից 6-ի վերաբերյալ Հանձնաժողովը տրամադրել է դրական, 3-ի վերաբերյալ՝ դրական՝ վերապահումով, 1-ի վերաբերյալ՝ բացասական եզրակացություն։

Դրական՝ վերապահումով և բացասական եզրակացությունների համար հիմք են հանդիսացել թեկնածուների գույքային դրության առնչությամբ արձանագրված անհամապատասխանությունները։

- Դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության ենթաբաժինը համալրելու նպատակով հարցազրույզի փուլ անցած 7 թեկնածուներից 5-ի վերաբերյալ Հանձնաժողովը տրամադրել է դրական, 1-ի վերաբերյալ՝ դրական՝

վերապահումով եզրակացություն։ Մեկ թեկնածուի բարեվարքության վերաբերյալ վերջնական գնահատական չի տրվել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ եզրակացությանը կողմ չեն քվեարկել Հանձնաժողովի անդամների կեսից ավելին (2 (երկու) կողմ, 1 (երկու) դեմ)։



Այսպես՝ դիտարկված բոլոր որակավորման ստուգումների գրավոր փուլը հաղթահարած, ինչպես նաև այլ հիմքերով հարցազրույցի փուլին մասնակցած 37 թեկնածուներից 22-ը ԿԿՀ-ի կողմից ստացել է դրական եզրակացություն, 11-ը՝ դրական վերապահումով, 1-ը չի գնահատվել ձայների հավասար բաշխման պատճառով, իսկ թեկնածուներից 3-ը՝ բացասական եզրակացություն։

3.8.2 Հարցազրույցի փուլը հաղթահարած թեկնածուների բարեվարքության վերաբերյալ տեղեկատվություն

Կազմակերպությունը նաև հարցում է ներկայացրել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին, որով խնդրել է տրամադրել տեղեկություն, թե 2022 թվականի նոյեմբերի 21-ին, 2023 թվականի մարտի 27-ին, 2023 թվականի նոյեմբերի 27-ին տեղի ունեցած, յուրաքանչյուր որակավորման ստուգման արդյունքում հարցազրույցի փուլը հաղթահարած թեկնածուներից քանիսի՞ վերաբերյալ է Հանձնաժողովի խորհրդատվական եզրակացությունը եղել «դրական», «դրական վերապահումով» և

«բացասական»՝ ըստ մասնագիտացման և առանց անձնական տվյալների ներկայացման։ Ի պատասխան հարցմանը՝ ԿԿՀ-ն տրամադրել է տեղեկություն, համաձայն որի՝

- Հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության ենթաբաժինը համալրելու նպատակով հարցազրույցի փուլը հաղթահարած թվով 3 թեկնածուներից 1-ի վերաբերյալ Հանձնաժողովը տրամադրել է դրական, թվով 2-ի վերաբերյալ՝ դրական՝ վերապահումով եզրակացություն։ Դրական՝ վերապահումով եզրակացությունների համար հիմք են հանդիսացել թեկնածուների գույքային դրության առնչությամբ արձանագրված անհամապատասխանությունները։
- Հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի Կոռուպցիոն հանցագործությունների քննության ենթաբաժինը համալրելու նպատակով հարցազրույցի փուլը հաղթահարած թվով 3 թեկնածուներից 1-ի վերաբերյալ Հանձնաժողովը տրամադրել է դրական, 1-ի վերաբերյալ՝ դրական՝ վերապահումով, որի համար հիմք է հանդիսացել թեկնածուի՝ աշխատանքային գործունեության ընթացքում դրսևորած վարքագիծը, 1-ի վերաբերյալ՝ բացասական եզրակացություն, որի համար հիմք են հանդիսացել թեկնածուի՝ աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև զանգվածային լրատվական միջոցներում հրապարակված տեղեկությունները՝ համադրությամբ։

Անդրադառնալով 2024 թվականի ապրիլի 30-ին կայացած հարցազրույցի փուլի վերաբերյալ կազմակերպության հարցմանը՝ ապա

- Դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի կոռուպցիոն հանցագործությունների քննության ենթաբաժինը համալրելու նպատակով անցկացված հարցազրույցի փուլը հաղթահարած թվով 3 թեկնածուներից 2-ի վերաբերյալ Հանձնաժողովը տրամադրել է դրական, թվով 1-ի վերաբերյալ՝ դրական՝ վերապահումով եզրակացություն։

Դրական՝ վերապահումով եզրակացության համար հիմք են հանդիսացել թեկնածուի գույքային դրության առնչությամբ արձանագրված անհամապատասխանությունները։

- Դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության ենթաբաժինը համալրելու նպատակով անցկացված մրցույթի հարցազրույցի փուլը հաղթահարած թվով 3 թեկնածուների վերաբերյալ Հանձնաժողովը տրամադրել է դրական եզրակացություն։



Այսպես, բոլոր որակավորման ստուգումների արդյունքով հարցազրույցի փուլը հաղթահարած 12 թեկնածուներից 7-ը ԿԿՀ-ի կողմից ստացել է դրական եզրակացություն, 4-ը՝ դրական վերապահումով, 1-ը՝ բացասական եզրակացություն։ Այսպիսիով, ԲԴԽ կողմից հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկվել է նաև բացասական բարեվարքություն ունեցող թեկնածու։

4. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՓՈՒԼԸ ՀԱՂԹԱՀԱՐԱԾ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ

Կազմակերպության կողմից ուսումնասիրվել են նաև հարցազրույցի փուլը հաղթահարած դատավորի 12 թեկնածուների վերջին զբաղեցրած պաշտոնները: [53]

– Թեկնածուներից 9-ը աշխատել են դատական իշխանությունում, համապատասխանաբար զբաղեցնելով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի պաշտոնները, Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի օգնականի, Վերաքննիչ քրեական դատարանի, Վերաքննիչ քաղաքացիական դատարանի և Վարչական վերաքննիչ դատարանի դատավորների օգնականների, Վճռաբեկ քաղաքացիական և վարչական պալատում դատավորի օգնականի,

[53] Դատավորի թեկնածուների զբաղեցրած պաշտոնների մասին մանրամասն տե՛ս
https://court.am/hy/official-inner/336
https://court.am/hy/official-inner/335
https://court.am/hy/official-inner/379
https://court.am/hy/official-inner/467
https://court.am/hy/official-inner/469
https://court.am/hy/official-inner/491
https://court.am/hy/official-inner/490

Հակակոռուպցիոն դատարանի դատավորի օգնականի, Դատական դեպարտամենտում՝ բաժնի պետի պաշտոնները։

- Թեկնածուներից 1-ը զբաղեցրել է Շիրակի մարզի դատախազության դատախազի պաշտոն։
- Թեկնածուներից 2-ը հանդիսացել են մասնավոր ոլորտի ներկայացուցիչներ, համապատասխանաբար զբաղեցնելով ՍՊԸ տնօրեն պաշտոն, իսկ մյուս թեկնածուն հանդիսացել է փաստաբանների պալատի անդամ փաստաբան, ինչպես նաև համատեղությամբ աշխատել է ՍՊԸ-ում՝ որպես փորձագետ-խորհրդատու։

Նշվածից պարզ է դառնում, որ դատավորի պաշտոնում ընտրված թեկնածուների մեծամասնությունը հանդիսացել են դատական իշխանության ներկայացուցիչներ։

5. ԸՆՏՐՎԱԾ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ ԴԱՏԱՎՈՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ

Հարցազրույցի փուլը հաղթահարած 12 թեկնածուներից դատավորի պաշտոնում նշանակվել են միայն 3-ը, որոնցից 2-ը մինչև դատավորի պաշտոնը ստանձնելը զբաղեցրել են դատավորի օգնականի պաշտոններ, 1-ը՝ դատախազի պաշտոն։ Մասնավորապես, թեկնածուներից մեկը զբաղեցրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի օգնականի պաշտոնը, մյուսը՝ Հակակոռուպցիոն դատարանի դատավորի օգնականի պաշտոնը։ Թեկնածուներից մեկը զբաղեցրել է Շիրակի մարզի դատախազության դատախազի պաշտոնը։

Դատավորի պաշտոնում նշանակված 3 դատավորներից 2-ը դատավորի պաշտոնը զբաղեցրել են 2023 թվականից՝ համապատասխանաբար նշանակվելով դատավորի պաշտոնում 2023 թվականի մարտի 24-ին և հոկտեմբերի 7-ին իսկ 1 դատավոր՝ 2024 թվականից՝ նշանակվելով 2024 թվականի հուլիսի 1-ին:

Անհրաժեշտ է նաև նշել, որ հակակոռուպցիոն դատարանի դատավորների համալրման թեկնածուների ցուցակում ներառված անձանցից մեկը, հաղթահարելով հարցազրույցի փուլը դիմել է քաղաքացիական մասնագիտացման բաժնի հատուկ կարգով որակավորման ստուգմանը, որի արդյունքում թեկնածուն հաղթահարել է այն, ապա նշանակվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի պաշտոնում:

Դատավորներից մեկը, ընտրվելով հակակոռուպցիոն դատարանի կոռուպցիոն հանցագործությունների քննություն իրականացնող դատավորների կազմում հանվել է Դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակից իր դիմումի համաձայն:[54]

[54] Տե՛ս https://www.facebook.com/photo/?fbid=469022518751983&set=a.181352550852316

ԱՄՓՈՓՈՒՄ

1. Իրավագիտության բնագավառում գիտական աստիճան ունեցող անձինք, որակավորման ստուգմանը մասնակցում են պարզեցված ընթացակարգով՝ համաձայն դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 106-րդ հոդվածի։ Սակայն դատական օրենսգրքում հստակեցված չէ, թե հատկապես որ ոլորտի գիտական աստիճան ունեցող անձանց է կարգը վերաբերում, ինչի պայմաններում իրավունքի ցանկացած ճյուղային և ոլորտային գիտական աստիճան ունեցող անձը կարող է դիմել դատական օրենսգրքի 106-րդ հոդվածի հիմքով։
2. Որակավորման ստուգման գրավոր փուլը կազմված է թեստային առաջադրանքներից, ինչը լավագույնս չի արտացոլում թեկնածուի մտածողությունը և վերլուծական կարողությունները։
3. Նախնական հարցազրույցի փուլին փորձագետի ներգրավվածության վերաբերյալ իրավակարգավորումները ներկայացված են օրենքի անցումային դրույթներում, ինչը դժվարացնում է նորմի հասանելիությունը։
4. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տրված բարեվարքության վերաբերյալ եզրակացությունները կրում են խորհրդատվական բնույթ և հրապարակային չեն։
5. Բարձրագույն դատական խորհուրդը չի պատճառաբանում կոնկրետ թեկնածուի ընտրության որոշումը։

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Վերանայել իրավագիտության բնագավառում գիտական աստիճան ունեցող անձանց համար դատավոր դառնալու կարգը՝ ապահովելով, որ գնահատվեն թեկնածուի համապատասխան մասնագիտական կարողություններն ու հմտությունները և ոլորտային մասնագիտացման առկայությունը։
2. Պրակտիկայում ապահովել դատավորների թեկնածուների հավակնորդների որակավորման քննությունների գրավոր առաջադրանքների համապատասխանությունը օրենսդրական պահանջներին, որպեսզի դրանցով հնարավոր լինի գնահատել թեկնածուների վերլուծական միտքը, իրավակիրառ կարողությունները։
3. Նախնական հարցազրույցի փուլին փորձագետի ներգրավվածության վերաբերյալ իրավակարգավորումները արտացոլել Դատական օրենսգրքի ընդհանուր դրույթներում։
4. Օրենսդրությամբ նախատեսել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տրվող բարեվարքության գնահատման եզրակացությունների հրապարակայնությունը։
5. Օրենսդրությամբ նախատեսել Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատավորների թեկնածուների և առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի համալրման որոշումների հիմնավորվածությունը։

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Հոգեբանական և այլ բնույթի հարցեր.

- ո՞րն է հավակնորդի՝ դատավոր դառնալու շարժառիթը,
- ո՞րն է արդարության խորհրդանիշը հավակնորդի համար,
- ո՞րն է հավակնորդի վերջին կարդացած գիրքը,
- ո՞րն է հավակնորդի սիրած/չսիրած գույնը,
- ո՞րն է հավակնորդի հոբբին,
- կյանքի իրավիճակ, որին հավակնորդը դժվար է հասել,
- դատավորի իդեալին ո՞ր հատկանիշներն են մոտեցնում ըստ հավակնորդի,
- իրավիճակի փոփոխությունները ազդեցություն ունե՞ն հավակնորդի վրա,
- ո՞րն է հավակնորդի նվազագույն և առավելագույն նպատակները,
- սահմանված 2 թափուր տեղերի պայմաններում ինչո՞ւ հենց հավակնորդին պետք է Խորհուրդը ընտրի,
- ինչպիսի՞ քայլեր է հավակնորդը ձեռնարկել դատավորի աշխատանքը ճանաչելու համար,
- եթե հավակնորդը ունենար կախարդական փայտիկ ի՞նչ կաներ,
- արդյո՞ք ինչ որ մեկի կարծիքը հավակնորդի համար ունի հեղինակություն,
- արդյո՞ք երբևէ հավակնորդի մոտ արդարության զգացումը բախվել է պատասխանատվության զգացման հետ,
- ինչպիսի՞ հատկանիշներ պետք է ունենա դատավորը ըստ հավակնորդի,
- ինչպե՞ս լուծել դատարաններում ծանրաբեռնվածության խնդիրը ըստ հավակնորդի,
- երբևէ կաշառք առաջարկե՞լ են հավակնորդին,
- ինչպիսի՞ գործերից կհրաժարվի հավակնորդը, որպեսզի անաչառ լինի,
- հավակնորդն ի՞նչ է հասկանում անաչառ ասելով,

- եթե հավակնորդին ինչ որ հարցով դիմեն և խոստանան, որ հետագայում կօգնեն, որպեսզի հավակնոդրը դառնա վերաքննիչ դատարանի դատավոր, ինչպիսի՞ քայլեր կձեռնարկի հավակնորդը,
- ո՞ր իրավիճակում է հավակնորդն իրեն անօգնական զգացել,
- 10 աստիճան բալային համակարգում ո՞ր սանդղակում կգանահատեր հավակնորդն իրեն,
- հավակնորդի վերաբերյալ երբևէ անարդար վարվե՞լ են,
- դատավորի աշխատանքում ո՞ր ասպեկտ է հավակնորդին դուր գալիս,
- շարունակել միտքը. աշխարհը ինձ պետք չէ առանց…
- կունենա արդյո՞ք անարդաության զգացում եթե ընտրվի որպես դատավոր, քանի որ հավակնորդն այդ ժամանակահատվածում աշխատել է դատական դեպարտամետում,
- ո՞րն է հավակնորդի սիրած երաշտությունը,
- ո՞րն է հավակնորդի սիրած գրական ստեղծագործությունը,
- շատ լավ իրավաբանը կարո՞ղ է դառնալ դատավոր ըստ հավակնորդի,
- ինչպե՞ս է հավակնորդը հաղթահարում սթրեսային իրավիճակները,
- անհատակա՞ն թե կոլեգիալ աշխատանք է նախընտրում հավակնորդը,
- ի՞նչ է ներքին համոզմունքը ըստ հավակնորդի,
- կյանքից մի դեպք, որից տպավորվել է հավակնորդը,
- ո՞ր անձնավորությանը հավակնորդը կհամարի պատասխանատու,
- ինչպիսի՞ հոգեվիճակում է հավակնորդը, երբ հարցազրույցի փուլը չի հաղթահարել, ըստ թեկնածուի արդա՞ր է վարվել խորհուրդը իր նկատմամբ,
- ինչպիսի՞ վերաբերմունք է ունեցել հավակնորդը այն կոլեկտիվներում, որտեղ աշխատել է։